

Կ Ո Ւ Ո Ց

ԱՄՐՏՈՒԼՈՒ «ՀԱՄԱԼՍՈՒԹՅԱՆ» Ը

«Արդ՝ ի հին եւ ի վաղեմի ժամանակաց կայր Կառնուսն վարդապետաց ի քաղաքն Բագէշ ի վանքն, որում Ամրտու ասն, որ յաջորդելով մի զմի եհաս մինչեւ ի ժամանակս հարց մերոց:»
Ա. Գրապիժեցի ԳԼ ԻԹ.

Բաղէշի արեւմտեան անկիւնը, Խոջէր-Վեպի գրեթէ ափին վրայ, կը բարձրանայ Ամրտու անուան նուիրուած փոքրիկ վանքը, իր գեղեցիկ Տաճարով: Ամրտու վանքը, բարեբախտաբար հոգեւոր եւ մտաւոր կրթութեան «համալսարան» մը՝ դպրեւանք մը՝ եղաւ երբեմն, կամ թէ աւելի շատ գործածուած բառով՝ Կառնուս մը, բուրրովին տարբեր այն վանքերէն, որոնք աւելի փոր կշտացընելու համար շինուած են քան թէ միտք:

Յովհաննէս Աղլոտ, ինքն իր գրչով նուիրագործած է համալսարան կոչումը՝ իր հարազատ ու արժէքաւոր յիշատակարանին մէջ, զոր «պատմադրաբար» յօրինած եւ կցած է Ջենոբի առաջին հրատարակութեան վերջը:

ԺԷ. դարու առաջին կիսուն, մտաւոր զարթնում մը կը տիրէր հայ վարդապետներու կեանքին վրայ: Թէ Էջմիածնի նուիրակներուն շփումը Պոլսոյ, Իզմիրի, Ահաթանի հետ, եւ թէ տիրող լատին եւ իտալերէն լեզուներով հրատարակուած կրօնական գրքերուն յառաջ բերած հետաքրքրութիւնը, կրնան այս մտաւոր զարթնումին պատճառները բացատրել: